

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԲԻ ԹՈՒ ԲԻ ՍՊԸ-ն ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/78 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
7	David Medical	David Medical	DCR 60B/60G/60Y, DCR 46W/46B/46G, MSE 46/60, MLE 60	Ningbo David Medical Device Co., Ltd., Չինաստան	Ապրանքի անվանում՝ Գծային անաստամոզի մեխանիկական արտիկուլյացիոն կտրող-կարող գործիք (մեկանգամյա օգտագործման): Գործիքը պետք է նախատեսված լինի Էնդոսկոպիկ վիրաբուժության ընթացքում հյուսվածքների կտրելու և միաժամանակ գծային մեխանիկական կար ձևավորելու համար՝ ապահովելով բարձր ճշգրտություն, հեմոստազ և անվտանգ անաստամոզ: Մատակարարվող գործիքը պետք է ունենա առնվազն 360° պտտման

հնարավորություն, իսկ աշխատանքային մասը պետք է ապահովի առնվազն 60° արտիկուլյացիա յուրաքանչյուր ուղղությամբ (ընդհանուր՝ մինչև 120° երկկողմանի թեքում): Գործիքը պետք է ունենա ներկառուցված կտրող դանակ և ապահովի գծային կարի երկարություն՝ ոչ պակաս, քան 46 մմ և 60 մմ : Այն պետք է համատեղելի լինի 12 մմ տրամագծով տրոկարների հետ:Գործիքը պետք է կազմված լինի հիմնական սարքից և փոխարինվող քարթրիշից: Այն պետք է ապահովի անվտանգ արտիկուլյացիա, հյուսվածքի սեղմում, կտրում և գծային մեխանիկական կարի ձևավորում:Տիտանե ստեպլերային ամրակները պետք է պատրաստված լինեն մաքուր տիտանից, որը նախատեսված է վիրաբուժական իմպլանտների համար, իսկ բրանշները, ցողունը և կտրող դանակը՝ բժշկական նշանակության չժանգոտվող պողպատից:Գործիքը պետք է մատակարարվի ըստ անհրաժեշտության հետևյալ տարբերակներով՝ ձողի

					երկարությունը՝ 280 մմ, 340 մմ կամ 440 մմ, իսկ կարի երկարությունը՝ 46 մմ կամ 60 մմ:Քարթրիջներից յուրաքանչյուրը պետք է ապահովի հյուսվածքի կտրվածք և առնվազն 6 շարք տիտանե ստեպլերային ամրակների տեղադրում: Համակարգը պետք է ունենա ինչպես հավասարաչափ դասավորված ամրակներով քարթրիջներ (կտրվածքի յուրաքանչյուր կողմում՝ 3-ական շարք), այնպես էլ անհավասարաչափ դասավորված ամրակներով քարթրիջներ (օրգանի պահպանվող հատվածում՝ 4 շարք, հեռացվող հատվածում՝ 2 շարք կամ համարժեք տեխնոլոգիական լուծում), ինչը հնարավորություն կտա վիրաբույժին կատարել օպտիմալ ընտրություն տարբեր անատոմիական իրավիճակներում և տարբեր հաստության հյուսվածքների դեպքում:46 մմ կարի համար նախատեսված քարթրիջների տարբերակները պետք է լինեն՝2.0 մմ (փակված՝ 0.75 մմ),2.5 մմ (փակված՝ 1.0 մմ),3.5 մմ (փակված՝ 1.5 մմ),3.8 մմ (փակված՝
--	--	--	--	--	---

						1.8 մմ),4.1 մմ (փակված՝ 2.0 մմ):60 մմ կարի համար նախատեսված քարթրիջների տարբերակները պետք է լինեն՝2.0 մմ (փակված՝ 0.75 մմ),2.5 մմ (փակված՝ 1.0 մմ),3.5 մմ (փակված՝ 1.5 մմ),3.8 մմ (փակված՝ 1.8 մմ),4.1 մմ (փակված՝ 2.0 մմ),4.4 մմ (փակված՝ 2.3 մմ):Գործիքը պետք է ունենա անվտանգ գործարկման, հյուսվածքի սեղմման և մեխանիկական կարի ձևավորման մեխանիզմներ:Մատակարարման պայմանների համաձայն՝ յուրաքանչյուր 15 հատ քարթրիջի հաշվով պետք է տրամադրվի 1 հատ համատեղելի գծային անաստոմոգի արտիկուլյացիոն կտրող-կարող գործիք: Բոլոր բաղադրիչները պետք է լինեն նույն արտադրողի կողմից վավերացված և լիովին համատեղելի՝ ապահովելով համակարգի անվտանգ և արդյունավետ կիրառումը:Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, մեկանգամյա օգտագործման, առանձին գործարանային ստերիլ փաթեթավորմամբ և անմիջապես կիրառման համար պիտանի:Մատակարարը
--	--	--	--	--	--	---

					պարտավոր է ներկայացնել՝ Արտադրող ընկերության կողմից տրված ավտորիզացիոն նամակ:Արտադրանքի համապատասխան CE, FDA կամ համարժեք որակի և համապատասխանության հավաստագրեր:
ПОЛНОЕ ОПИСАНИЕ предлагаемого товара					

Би Ту Би ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕРԳԿ-ԷԱՃԱՊԶԲ-26/78 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
7					